

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԼԱՅՈՑ ԱՂՈՐԴԱՍԱՑՈՅՑԻՆ

(Շար. տես «Բազմավէպ» 1961, թ. 6-8, էջ 146)

4. - Երրորդ ժամու աղօթքը՝ սկիզբը դրուած է Օշինի ժամադրքին մէջ. Մարիունը չունի «Օրհնեալ Հոգիդ սուրբ» կցուրդը՝ որ կար նախորդ շրջանին. նոյնպէս միւս երկու ժամերուն, որ Վարդան արեղայի ծանօթ է: Օրհնեմք գեղը արտաքին քառասորդաց զեռ չեն երգեր: Օշինինը ու Մարիունը ունին հոս եւ միւս ժամերուն մէջ Յամեմայն ժամ կցուրդը, իսկ Օրհնութիւն ոչ, որուն գոյութիւնը երկրայելի էր նախորդ շրջանին: Օշինինը յետ Յամեմայն ժամին կը գրէ. «Եւ ասեն զկանոնն որ սա լինի (ըստ Մարիունի՝ Տէր ապաւէն) եւ յետ Տէր, տէր օրհնեալ սաղմոսին ասեն երկու կանոն ալ», ինչ որ եղական ու չափազանց է. Մարիունինը կը գոհանայ մէկ կանոնով: Արքայականը զանց ըրած է Առաջնորդեա մեզ աղօթքին յաջորդ Յիշեա տէր գալաւոսեայն (մոռացութեամբ, որովհետեւ միւս ժամերուն մէջ կայ), զոր Մարիունի կը պահէ: Տէր հովուեցէ սաղմոսին կը յարէ չափականներ՝ ըստ ութ ձայներու. առաջին երեքը կազմուած հինգ հինգ տուներէ, Հոգեղայտեան եւ Աստուածածնի. եւ միւսներն երկու երկու տուներէ: Ապա քրդ. Գոհարանելով ու աղ. խաղաղութեամբ, որուն կը յաջորդէ առանձնական երկար աղօթք մը առ Ս. Հոգին: Մարիունինը ալ յաւելուածներէն ոչինչ ունի. ալ սովորական աղօթքներն ու 2 կանոնը միայն, նոյն չափը պահելով հոս եւ յաջորդ ժամերուն մէջ, եւ զեղչելով աղուհացից երգերն (Օրհնեմք գեղ եւն.) ու մեծ քարոզներն ու աղօթքները, որով կը զլացնէ՝ թէ ինչ որ գրած է՝ լուր օրերու յատուկ պաշտօնն էր: Իսկ թ. 252 Գոհարանելով քարոզին առջեւ կը գնէ եւ եւս խաղաղութեան, որ նոյնպէս կը մնայ 1634ի եւ 1663ի ժամադրքերուն մէջ:

Վարդան արեղայ, ըստ Մաքենեաց ըսկըքնաւորութեան, որուն կը հետեւի հոս եւ հետեւորդ երկու ժամերուն, պաշտամունքի գլուխը կը գնէ սովորական առաջին կցորդն անսովոր շարադրութեամբ մը. «Արհնեալ է Հոգին սուրբ Աստուած նշմարիտ, ընդ Հաւր եւ ընդ Որդւոյ՝ այժմ...» ալսպէս նաեւ յաջորդ երկու ժամերուն, որուն կը յարէ եւ եւս խաղաղութեան եւ Արհնութիւն եւ փառք Հաւր... (որ չեն գտնուիր ալուր) եւ ապա Ողորմեա: Հոս նշանակած է Արհնեմք գեղ երգը, եւ հետագայ երկու ժամերուն ոչ, որմէ կրնանք հետեւցնել՝ թէ արտաքին քառասորդաց առաջինը միայն կ'երգէին, ինչպէս այժմ մենք: Յետ յամեմայն ժամու կը գնէ եւ եւս խաղ... եւ ապա Մաքենեաց Օրհնութիւն եւ փառք, յետոյ «սկսնուն կանոն մի... լիակատար», հակառակ ուրիշներու կրճատման, որուն կը յաջորդեցնէ շարականս «ԳԶ. Յաւրհնութիւն նոր օրհնեցուք զտէր» որ չկայ ալուր: Ունի մեծ քարոզներն եւ աղօթքներ՝ առանց ակնարկելու աղուհացից: Յետ Տէր հովուեցէին կը գնէ «Շար. հոգւոյ գալտեան՝ յամէն ձայնէ մի, եւ մի Աստուածածնի Մեծացուցէ» (հաւասար Օշինի եւ անծանօթ միւսներուն): Իսկ վերջին Հայր մերին կը յարէ Զսաղմոս երգութիւնս եւ գաղաչանս մաղթանքը, որ կը թուի զետեղուած հոս, փոխանակ իննեորդ ժամու վերջը, ուր պակաս է, հակառակ նախկին սովորութեան:

5. - Վեցերորդ ժամը միակն է երեքն, ուր Օշինինը ամբողջութեամբ կու տայ մեզի եւ բան մ'ալ աւելի. «Յամեմայն ժամ աղաչանք... սրկն. ասէ եւ եւս խաղաղութեան...: Արհնեա (այս անուն, անծանօթ ալուր): ԳԶ. Արհնութիւն եւ փառք». ուր Մարիուն երեք ժամերուն ալ ունի լուր Յամեմայն ժամ աղաչ. առանց յաջորդներուն: Օշին ապա կը գնէ (կեցո գնա Աստուած) եւ ԿԹ (Աստուած յոգնել ինձ) սաղմոսներն ամբողջ, փոխանակ է կանոնին, զոր ունի Մարիունինը առանց միւսներուն: Իսկ յետ Տէր մի՛ յիշերին կը յաւելու լէ սաղմոսը (Տէր, մի՛ սրտմոռութեամբ քով), ապա շարականներու շարք մը ըստ ութ ձայներու (նոյնպէս անծանօթ Մարիունին). առաջինն աւագ օրհնութենէ մը, յաջորդ երկուքը (կամ մին) աղաչարութեան Ողորմեաներէն, եւ վերջինը Մեծացուցէներէն. իւրաքանչիւրը կազմուած երեք տուներէ. Մարիունի յաւելուածն «չր. Յոյս եւ յարութիւն. ապաշխար. Հայր բազումողորմ, որ ձայն լինիս»: Հայր գրութեանցին կը կցէ ուրիշ առանձնական աղօթք մը: Իսկ թ. 252 մեծ քարոզին առջեւ կը յաւելու եւ եւս խաղաղութեան. նոյնպէս Վասն հիւանդացին եւ Խնդրեցուք հաւատովին: Մարիունի յաւելուածն յետ Խաւարեցաւին կը գնէ. «Կեցո գուրգայն», եւ յետ մեծ աղօթից «Տէր, մի՛ սրտմոռութեամբ. եւ եւս ասացի»:

1375ի աղօթամատոյցն ճաշու պաշտամունքին վերջ կը յաւելու «Վեցերորդ ժամուն խրատք», անշուշտ յատուկ աղուհացից, ուր կը գնէ Խաւարեցաւ լոյսն աւելում, եւ «Կեցո գուրգայն», որ Դ կանոնին վերջինն է (Սղ. ԿԸ), Օշինի նշանակածն իսկ. ապա մեծ քարոզն եւ աղօթք, «աղ. Տէր, մի՛ սրտմոռութեամբ, եւ եւս ասացի», զոր կը պահեն Մեծոփեցին (1634ին թերթ ընկած է) եւ 1663ին:

6. - Իններորդ ժամուն յետ Զարչարակցեալին, Օշինինը կը նշանակէ «ՂԱմբիծքն զԴ (թերեւս զԳ) Գուրգայն ի լման», փոխանակ Մարիունի Ը սաղմոս

սականոնին, ուր յաւելուածը կը գրէ. «ՂԱմբիծքն լման ասա», եւ անոր կը յարէ «Գրդ. Սուրբ խաչիւս, իւր սարօքն»:

Վարդան արեղայ Ողորմեային առջեւ հոս ալ ունի եւ եւս խաղ. եւ Արհնութիւն եւ փառք: Յետ Յամեմայն ժամու՝ «Դարձ առ մեղ Աստուած փրկիչ մեր եւ դարձո», եւ անսովոր քարոզ մը, որ կայ Ոսկանի քով, «Այաչեցուք զտէր մեր եւ զփրկիչն Յիսուս Գրիստոս որ տարածմամբ ձեռաւք իւրովք ժողովեաց առ ինքն զհաւատացեալքս որպէս հաւ զձագս իւր, զի զհաւացեալքս ի նմանէ արժանաւորեցէ վերստին ժողովել ընդ հովանեալ թեւոց իւրոց: Ամենակալ տէր Աստուած մեր կեցուցէ եւ ողորմեացի»: Կը հետեւի ուրիշ աղօթք մը՝ նոյնպէս անսովոր. «Յիսուս Գրիստոս, որդի Աստուծոյ կենդանոյ, զիր զշարժարանս քո եւ զմահ եւ զխաչ քո ի մէջ դատաստանի եւ հոգւոյ իմոյ այժմ եւ ի ժամ մահուան իմոյ. եւ առատաձեռնել արժանացոյ զնորհս եւ զողորմութիւն ամենայն հաւատացելոց, եւ քեզ ընդ Հաւր եւ ամենասուրբ Հոգւոյդ»: Յետոյ «Կանոն մի սաղմոս ասեն լիակատար»: Յետ Տէր մի՛ յիշերին՝ չր. «Յոյս եւ յարութիւն, յոր ձայնէ որ ես՝ յայնմհետէ ասա մի ողորմեա ապաշխարութեան» իսկ ընդ մէջ Փարատեցոյն եւ Հայր գրութեանցին (միւս մասերը զեղչած է) «Աւետ. խաչելութեան», որ նոյնպէս անծանօթ է միւսներուն:

Նախապետին Արքաիւմու երգը տեղափոխուած է այժմ Տէր մի՛ մատնելի վերջը. 1375ի, թ. 252, 1408ի եւ 1598ի ժամադրքերը Աղաչեցուք քարոզին առջեւ կը գնեն եւ եւս խաղաղութեան: Յետ Սիրեցի փոխին կայ շարական ութ ձայնի վրայ, իւրաքանչիւրը երեք երեք տուներով, կազմուած խաչի, հանգստեան եւ Աստուածածնի մէկ մէկ տուներէ, որոնք չկան Մարիունի եւ թ. 252 օրինակներուն մէջ, բայց կան Մարիունի յաւելուածին մէջ: Վասն հանգուցեալ քրդի առջեւ. եւ եւս խաղաղ. Օշինինը յետ Քրիստոս որդի աղօթքին կը յաւելու առանձնական ընդարձակ աղօթք մը:

1375ինը կը յաւելու նախորդ ժամու խրատին վրայ նաեւ «Ութերորդ» (այսինքն իններորդ) ժամու խրատը. եւ կը սկսի այսպէս. «Արհմեցից գտէր յամենայն ժամ», (անդոյ ալուր), չր. Զարչապակցեալ. եւ զԱմբիծսն ի լման (անսուր). քր. Սուրբ սրտիւ եւ հաստատ. իւր սարաւքն. չր. յոր ձայն լինիս, խաչի եւ հանդստեան եւ Աստուածածնի. աղ. Քրիստոս որդի Աստուծոյ: Հոս ալ ունինք քառասորդաց պատկերը, ինչ ինչ մասերով նման Օշինի օրինակին:

Վարդան արեղայ ունի իններորդ ժամուն մեծ եւ փոքր քարոզներն եւ աղօթքները. Ողորմեային առջեւ եւ եւս խաղ. եւ Արհմութիւն եւ փառք. անյիշատակ կը թողու սաղմոսականոնը, թերեւս մոռացութեամբ. Նախապետին Արքաեանու երգը դրուած է յետ Տէր, մի' մատներին. եւ յետ Անկեալին ունի «չր. Զիզգիս ծառայից», լուծեամբ անցնելով միւս յարակից մասերուն վրայէն:

Գր. Տաթեւացին Քառասորդական Պահոց սեպհական կը զնէ ճաշու երեք ժամերուն՝ «Երեքին ողորմեայքն՝ հանդերձ երեք կանոն սաղմոսաւն» (Հտր. Զմր. 357):

Կոստանդինի երգարանն ունի «Աղինք պահոց, որ թ ժամու Սիրեցի սաղմոսին վերջնթեր համարն է. «Օրհնեցէք դուք ամենայն ազիմք» եւս., զոր խաղաղրած է այսպէս. «Ամենայն աղինք. ալելուիա, ալելուիա», եւ Փառք Հօր. վերջը ծանրացուցած. «սրբոյ Հոգւոյն, ալելուիա (146բ): Թուով հինգ են, ինչպէս եօթնեակի պահոց օրերը, եւ Դժ. Զ. օրերը:

Օշինի ժամագիրքը, ինչպէս եւ թ. 252 եւ 1408ի, 1598ի ժամագրքերը սեղանի Գոհութեան կանոնին մէջ կը յաւելուն մաղթանքը. «Կերակրիչ եւ ուրախարար տէր, փառք քեզ», եւ «Զկերպոյս Աստուած օրհնեցէք», պահելով անփոփոխ բոլոր միւս մասերը: Իսկ Գր. Տաթեւացին կու տայ հետեւեալ տեղեկութիւնը. «Նշանաւ խաչին կնքեմք դամենայն կերակուրս եւ զըմպելիս» կերակուրէն առաջ. «Իսկ

յետ կերակրոյն՝ դարձեալ օրհնեմք կըրկին» . ապա կը յարէ՝ թէ «ոմանք երեք կին օրհնեն, ի սկիզբն» ի մէջն եւ յետ կերակրոյն» (Հտր. ամբ. 348):

7. — Երեկոյի պաշտամունքը երեք բաժանուած ունի արքայական աղօթամատոյցին մէջ. «պահոց» (եւ մարտիրոսաց), «Կերակամութի» եւ «Կերակէի»: Առաջաբանի սաղմոսին յաջորդող Փառք Հարն եւ այժմ եւ միշտ մէկ հոգւոյ ըսել կու տայ շարունակաբար, «Սարկաւազին» բերանը զնելով եւ եւս խաղաղութեանը միայն, որուն զպիւրը կը պատասխանէ՝ «Տէր ողորմեա. կեցո տէր» . եւ ապա քահ. «Արհմութիւն եւ փառք»: Մարիունինը համառօտած է զանոնք, զեղչելով եւ եւս խաղ. եւ յաջորդները, իսկ 1375ի եւ 1408ի ժամագրքերը եւ եւս խաղաղութեանը քարոզին կը յարեն նախ «Արհմեա տէր» . եւ իսկոյն «Արհմութիւն եւ փառք»:

Մարիունինը չունի Ապրեցոյի նախադաս եւ եւս խաղ. եւ Օրհմութիւն եւ փառք:

Տեսանք Լոյս գուարքին խափանումը նախորդ դարէն մինչեւ հոս. բայց այժմ վերստին կը նորոգուի, եւ օրինակուած է 1375ի, թ. 252ի եւ 1408ի ժամագրքերուն մէջ, եւ հաստատուած Տաթեւացիին ալ՝ թէ «մեք յամենայն շարաթս յերեկոյի Լոյս գուարք սուրբ ասեմք» (քրդ. ձմր. 605):

Կոստանդինի երգարանն ունի «Համբարձիք ապաշխարութեան», կազմուած սաղմոսին առաջին տան վերջաւորութեամբ «ինձ աւղնութիւն, Ալելուիա, ալելուիա», եւ Փառք Հօրի վերջէն. «Եւ սրբոյ Հոգւոյն. ալելուիա, ալելուիա» . խաղաղութեան ըստ նոյն ձայներու (145բ). բաժնած է «Կերպի եւ Յոհաննու կերակմոսի համբարձիք», որ կը հանդիպին Քառասորդաց մէջ:

Օշինինը Տէր ամենակալի քարոզին ըսելիքն ունի սա յաւելուածը «Քարոզ՝ եւ եւս խաղաղութեան (Դպ. Տէր ողորմեա: Եւ քարոզին վերջը դարձեալ երեք Տէր ողորմեա. (առաւօտուն չեն նշանակուած

Տէր ողորմեաները): Մարիունի քով երեկոյին կը պակսի զուցէ համառօտութեան համար՝ Մանասէի աղօթքն, իւր սարօք: Թ. 252, 1375ի 1408ի ժամագրքերն ալ, Մեծօփեցին ալ ունին ատիկա, նոյնպէս 1599ինը. եւ յաւելուածներէն միայն եւ եւս խաղաղութեան:

Օշինի ժամագիրքը զուրկ է 1284ի դանդան աղօթքներէն. ընդ հակառակն «Ծնունդի եւ Աստուածամի» տօներուն կը նշանակէ քրդ. «Սուրբ զԱստուածածինն»... Դպ. Կեցո տէր: Քահ. Ընկալ տէր գաղաչանս մեր...» (43):

Օշինինը Խնդրեցումին առջեւ ունի եւս խաղաղութեան, ինչպէս 1408ին ալ (թ. 252 եւ 1375ինը, 1655ինը չունին): Թ. 252 եւ 1375ի ժամագրքերը այս շրջանին առաջին անգամ ունին եւս խաղաղութեան, եւ անկէ վերջ՝ Զբարձրեալն գրիստոս մաղթանքը, որ խառնուած է եւ մեք միաբան քարոզին հետ, որուն կը յաջորդէ Տէր ողորմեա. 1408ինը նոյնպէս ունի. նոյնպէս 1598ինը առանց Տէր ողորմեային: Մարիունին անջատ դրած է «Մարտիրոսի» յատուկ Զբարձրեալն, եւ մեք միաբան եւ Տէր ողորմ. երեքն ալ պակաս Օշինին մէջ, եթէ համառօտողին վրէպակն չէ: Զկան եւ յօր. 1284ին:

Օշինին կիրակիներուն յատուկ կնքման մասերը՝ Խնդրեցումն եւս. համառօտուած են հրատարակչէն (43), եւ դատելով մընացորդներէն, հաւասար ըլլալու են Առաւօտուն ըսուածներուն հետ: Իսկ Մարիունինը կը պահէ առաւօտեան համառօտ չափը (47): 1375ին առաւօտուն պակաս, եւ երեկոյին համառօտած է: Ժմգ. 252 ունի առաւօտին, եւ երեկոյին համառօտած է: 1408ինը կը զրէ. եւ եւս խաղ. — Խնդրեացուք. — Թագաւոր. եւ վերնագիր՝ «Քարոզ արձակման կիրակէից, յինանց եւ տէրունական տօնից»:

8. — Խաղաղականի կազմութեան մէջ 1375ի եւ թ. 252 ժամագրքերը համաձայն

են 1284 օրինակին հետ, հետեւեալ տարբերութիւններով: Զանց կ'ընեն Փառք Հօրը, որ բնականօրէն կը յաջորդէ սաղմոսներուն, եւ հարկ չկար դրելու: Յետ Օրհմութիւն եւ փառքին՝ 1375էն թուղթ ինկած է. իսկ թ. 252 չունի սաղմոսականոնը իր քարոզն ու երանեալը: Իսկ Շնորհեա մեք տէրին երկու գրչագիրները կը միանան իրարու: Օշինի օրինակէն սկսեալ՝ կը զեղչեն ի քեզ նայիմքն ալ յետ Տէր լոյսին, ինչպէս յայտնի կերպով դրած է արքայական օրինակը: Նմանապէս վերջին Տէր Աստուած մեր աղօթքը՝ իր նոր տեղը բռնած է այժմ Հանգստեան պաշտամունքին մէջ: Առաւելագոյն զանազանութիւններ ունի Օշինինը առաջին եւ այդ օրինակներէն:

Առաջաբանի Տէր Աստուած փրկ. սաղմոսին յաջորդող եւ եւս խաղաղութեան (նաեւ 1408ինը) կը յարէ Արհմեա տէր. իսկ ի նեղութեան կանոնին՝ զոր «ի լման պաշտել» կու տայ, կը յարէ պահոց յատուկ իր մաղթանքը, «Լուր մեք տէր» (փոխանակ քարոզին): Ապա վերստին ունի «Եւ եւս խաղաղութեան...: Արհմեա, Ֆուլան (այս անուն): Արհմութիւն եւ փառք...», եւ յետոյ ի կարգալն: Եւ եւս խաղաղութեան ունի նաեւ Աղաչեցում գամեմակալն քարոզին առջեւ, որ կայ 1375ի, թ. 252ի, 1634ի, եւ Մեծօփեցիի օրինակներուն մէջ եւս: Եւ յետ Շնորհատու բարեաց աղօթքին՝ ասեն (երկու բառ անընթեռնի) երեք զուրդայն, եւ կամ զեկեցէն: Երեք զուրդան մասերն են երանեալին, Տաթեւացիի ըսածին պէս՝ «Երեք փոխ են Ամբիծքն» (Սղմ. 418), եւ զոր 1284ինը սաղմոսականոնին հետեւ դրած էր, եւ այժմ տեղափոխուած է հոս՝ արդի ոճով, ինչպէս ունին ապա եւ Մեծօփեցին եւ յաջորդներն եւս: Բայց եկեցէն անտեղի է, որովհետեւ կրկնուած է յետոյ Հանգստեանին մէջ:

(Շարունակելի)

Հ. ՎԱՐԴԱՆ ՀԱՅՈՒՆԻ